

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի վարչական, ակադեմիական աշխատակազմերի և ուսանողների համար

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) **վարչական և ակադեմիական** (պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ) աշխատակազմի և **ուսանողների** համար (այսուհետ՝ Դերակատարներ) էթիկայի կանոնագիրքը (այսուհետ՝ Կանոնագիրք) նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է ԵՊՀ ԻՄ-ում աշխատակիցների և ուսանողների էթիկական վարքագծի սկզբունքները, իրավունքներն ու պարտականությունները և կարգապահական տույժերը:
- 1.2. Կանոնագիրքը կազմվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը, «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը, «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի» ծրագրի դրույթները¹, Մասնաճյուղի կանոնադրությունը և ներքին կարգապահական

¹ 2015-17թթ., դոկոր՝ Եվրոպայի խորհուրդ և Եվրոպական միություն, գործընկերներ՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ

կանոնները: Նրա կիրառելիությունն ապահովվում է Մասնաճյուղի համապատասխան կանոնակարգերի և ընթացակարգերի միջոցով:

- 1.3. Սույն Կանոնագրքի նպատակն է խրախուսել և ապահովել բարոյաէթիկական մշակույթը, մասնավորապես ակադեմիական ազնվության մշակույթը Մասնաճյուղում գործունեություն ծավալող պրոֆեսորադասախոսական, վարչական, ուսումնասօժանդակ և ուսանողական կազմերում, զարգացնել նրանց մեջ բարոյահոգեբանական, գիտամանկավարժական և կազմակերպական հիմունքները, ստեղծել միջանձնային բարենպաստ փոխհարաբերություններ՝ բարձրացնելով դերակատարների հեղինակությունը, պահպանել Մասնաճյուղի ամբողջականությունը և բարի համբավը՝ բարձրացնելով բուհի մրցունակությունը ներպետական ուսումնական հաստատությունների շրջանակներում, էթիկային, մասնավորապես ակադեմիական ազնվությանը վերաբերող հարցերին տալ համապատասխան լուծումներ:
- 1.4. ԵՊՀ ԻՄ-ի աշխատակիցները և ուսանողները կամավորության սկզբունքով պարտավորվում են հետևել սույն Կանոնագրքով հաստատված էթիկայի կանոններին և նորմերին:
- 1.5. Էթիկայի կանոնների և նորմերի պահպանմանը հետևում և դրանց խախտման դեպքերում առաջացած խնդիրները լուծում է **էթիկայի հանձնաժողովը** (այսուհետ՝ Հանձնաժողով):

2. ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կանոնագրքի հիմնական **խնդիրներն են.**

1. Դերակատարներին ներկայացնել Մասնաճյուղում էթիկայի նորմերը, դրանց պահպանման չափանիշները և դրանց խախտման դեպքում պատասխանատվություն կրելու ընթացակարգը:
2. Մասնաճյուղում ձևավորել էթիկայի սկզբունքների պահպանման անհրաժեշտ մշակույթ և միջավայր:

3. Դերակատարների մոտ խթանել և խրախուսել ազնիվ համալսարանական միջավայր ստեղծելու և պահպանելու պատասխանատվությունը:
4. Ապահովել էթիկայի կանոնագրքով սահմանված նորմերի և սկզբունքների մատչելիությունը և տարածումը համալսարանական Դերակատարների շրջանում:
5. Կանխարգելել ակադեմիական անազնվության դրսևորումները և զարգացնել ակադեմիական ազնվության պահպանման հնարավորությունները:
6. Պաշտպանել Դերակատարների իրավունքները և շահերը, նրանց համար ապահովել արդարություն:
7. Հաստատել կարգ ու կանոն Մասնաճյուղում և Դերակատարների միջև փոխհարաբերություններում:
8. Հստակեցնել Դերակատարների պարտականությունների վերահսկման մեխանիզմները:
9. Բարձրացնել հաշվետվողականության մակարդակը:
10. Անկողմնակալ և արդարացի լուծել էթիկայի նորմերի խախտմանը վերաբերող հարցերը և դեպքերը:

3. Էթիկայի ընդհանուր սկզբունքները

Դերակատարների համար էթիկայի հիմնարար սկզբունքները և դրանց դրսևորման ձևերն են.

3.1. Բարեվարքություն. Կրթական ոլորտի բոլոր Դերակատարների վարքագիծը պետք է համահունչ լինի հիմնական արժեքների վրա հիմնված դրական բարոյական և էթիկական սկզբունքների ու չափանիշների վրա: Այն կապող օղակ է էթիկայի սկզբունքների ու կրթության որակի միջև և միևնույն ժամանակ կանխարգելում է կոռուպցիոն դրսևորումները:

Ակադեմիական աշխատակազմի համար այն «ազնիվ և բաց եղանակով գիտելիք ձեռք բերելու և այն տարածելու» բարձր առաքելություն է և պահանջում է դրսևորել այդ առաքելությանը համահունչ վարքագիծ բոլոր Դերակատարների՝ վարչական, ակադեմիական աշխատակազմի, գործընկերների, ուսանողների, արտաքին

շահակիցների հետ իրենց փոխհարաբերություններում: Ակադեմիական աշխատակազմի համար այն կիրառվում է նաև ավելի կոնկրետ եզրույթով՝ «ակադեմիական բարեվարքություն»:

Ղեկավար և վարչական աշխատակազմն ունի հատուկ պարտավորություն: Նրանից պահանջվում է կառավարման և պաշտոնական բոլոր տեսակի գործընթացներում բարեվարքություն դրսևորել ավելի ցածր պաշտոն զբաղեցնող գործընկերների, ուսանողների, հանրության հետ փոխհարաբերություններում:

Ուսանողների համար բարեվարքությունը «ազնիվ և բաց եղանակով գիտելիք ձեռք բերելու» պարտավորություն է, որը սերտորեն առնչվում է Մասնաճյուղի ակադեմիական աշխատակազմի համար սահմանված «ակադեմիական բարեվարքությանը»: Նրանք Մասնաճյուղի ղեկավար ու վարչական, ակադեմիական աշխատակազմի, ուսանողների հետ փոխհարաբերություններում պետք է դրսևորեն համապատասխան վարքագիծ:

3.2. Ազնվություն. Բացառում և արգելում է մասնաճյուղի Դերակատարներին կատարել այնպիսի գործողություն, որը կարող է որակավորվել որպես խարդախություն, խաբեություն, շորթում, գողություն, ինչպես նաև այլ անազնիվ կամ քրեական բնույթի որևէ արարք:²

Ակադեմիական աշխատակազմը ուսանողների համար դասավանդում, ուսուցում և գնահատում իրականացնելիս պետք է պահպանի ազնվություն: Ուսանողների բոլոր տեսակի աշխատանքները պետք է գնահատվեն անաչառ՝ բացառելով կամայական բնույթի հովանավորչություն, արտոնություն, կողմնակալություն, կաշառքի դրսևորման կամայական ձև: Պետք է բացառվեն ուսանողներին անազնիվ քայլերի, դասագրքեր գնելու կամ վճարի դիմաց մասնավոր լրացուցիչ դասերի հաճախելու դրդելու կամայական դրսևորումները, ուսանողների կողմից գրագողության բոլոր դեպքերը պետք է դիտարկվեն անկողմնակալության սկզբունքով: Այսինքն՝ ազնվությունը բացառում է «Ակադեմիական տարբեր

² Տես սույն գրքի «Ակադեմիական ազնվություն և ակադեմիական անազնվություն» ենթաբաժինները:

աստիճանների որակի», Մասնաճյուղի հեղինակության ու վարկանիշի վրա անդրադարձող կամայական վարքագիծ:

Ղեկավար պաշտոններ զբաղեցնող Դերակատարներն իրենց պատասխանատվության տակ գտնվող բնագավառներում ունեն հատուկ պարտավորություն՝ իրենց պաշտոնական դիրքի շրջանակներում և միջանձնային հարաբերություններում լինել ճշմարտախոս:

Ուսանողները Մասնաճյուղի ակադեմիական աշխատակազմի նման պետք է ունենան խիստ պարտավորություն՝ ուսումնառության և գնահատման գործընթացներում հավատարիմ լինել ազնվության սկզբունքին: Ուսանողները գնահատման համար պետք է ներկայացնեն բացառապես իրենց կողմից կատարված աշխատանքներ (ինքնուրույն, գործնական, լաբորատոր, կուրսային, թե ավարտական)՝ խուսափելով գրագողությունից և խարդախությունից (ներառյալ համացանցային ձեռքբերումները): Նրանք պետք է զերծ մնան հովանավորչությամբ և կաշառք առաջարկելով գնահատական ստանալու (անկախ գնահատականի մեծությունից՝ բարձր, միջին թե ցածր) դրսևորումներից, լինեն ճշմարտախոս՝ Մասնաճյուղի բոլոր Դերակատարների հետ փոխհարաբերություններում:

3.3. Ճշմարտացիություն և թափանցիկություն. բխում են «ազնվությունից» և Մասնաճյուղի բոլոր Դերակատարներից պահանջում են ասել միայն «ճշմարտությունը» և չստել բարձրագույն կրթության համակարգի ներսում իրականացվող ցանկացած տիպի հաղորդակցության ժամանակ, գործել բացահայտ, կանխատեսելի և հասկանալի՝ խթանելու համար այլ Դերակատարների մասնակցությունը և հաշվետվողականությունը, ազատորեն հանրայնացնել ինչպես բուհի՝ որպես կազմակերպության, այնպես էլ բուհի բոլոր Դերակատարների՝ որպես անհատների մասին տեղեկատվությունը՝ պահպանելով չափը և անձնական տվյալների գաղտնիությունը (պայմանավորված այն հանգամանքով, թե ինչ դերակատարի մասին է խոսքը):

Ճշմարտացիության սկզբունքը ընդգրկում է «քննադատական վերլուծություն և հարգանք հիմնավորված տեսակետների»³ նկատմամբ, հարգանք «մտքերի ազատ փոխանակման և խոսքի ազատության» նկատմամբ⁴:

Ակադեմիական աշխատակազմը պետք է պահպանի ճշմարտացիության սկզբունքը և ապահովի ուսանողների դասավանդումը և ուսուցումն այնպես, որ ուսանողները կարողանան ձեռք բերել գիտելիքներ՝ անհրաժեշտության դեպքում նաև համապատասխան հետազոտությունների արդյունքների հիման վրա: Այն պետք է նպաստի ազատ և բաց, այսինքն՝ հնարավորինս թափանցիկ տեղեկատվության կազմմանը, ներկայացմանը և տարածմանը, մասնավորապես տրամադրի ճշգրիտ և լիարժեք տեղեկատվություն ուսանողների թվի, դասընթացի նկարագրի, ուսանողների գնահատման կարգի և այլնի վերաբերյալ՝ չխախտելով անձնական տվյալների գաղտնիությունը: Ակադեմիական աշխատակազմը պետք է հարգի ուսանողների տեսակետները և երաշխավորի նրանց մտքի ու խոսքի ազատությունը:

Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Դերակատարները պետք է ստեղծեն կազմակերպական և ֆինանսական այնպիսի կառուցվածքներ, որոնք կխթանեն գիտելիքների ստացումը և տարածումը ճշմարտացիության սկզբունքի հիման վրա: Նրանք պետք է հարգեն իրենց ենթակայության տակ գտնվող աշխատակազմի տեսակետները և երաշխավորեն նրանց մտքի ու խոսքի ազատությունը: Մասնաճյուղի ղեկավար և կառավարման պարտականություններ ունեցող աշխատակազմը պետք է ապահովի պաշտոնների և առաջխաղացումների հիմքում ընկած ընթացակարգերի թափանցիկությունը:

Ուսանողները պարտավոր են զարգացնել իրենց գիտելիքները՝ հիմնվելով ճշմարտացիության սկզբունքի վրա: Նրանք ոչ մի պատասխանատվություն չեն կրում Մասնաճյուղի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման թափանցիկության ապահովման համար, սակայն նրանք պետք է

³ Համալսարանների միջազգային ասոցացիա՝ Մագնա Կարտա դիտարան (ՀՄԱ-ՄԿԴ, 2012 թ.)

⁴ Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթության էթիկական արժեքների և սկզբունքների բուխարեւոյան հռչակագիր (ՅՈՒՆԵՍԿՕ-ՄԵՊԵՍ, 2004թ.)

պատասխանատվություն դրսևորեն սեփական սկադեմիական գործունեության թափանցիկության մասով ներկայացվող ցանկացած պահանջի դեպքում, օրինակ՝ ձեռք բերած ուսումնասիրությունների կամ հետազոտությունների արդյունքները ներկայացնելիս կամ տարածելիս: Ուսանողական կառույցների ներկայացուցիչները պետք է համապատասխան թափանցիկ մոտեցում դրսևորեն այդ մարմինների գործունեության մասին տեղեկատվության տրամադրման հարցում:

3.4. Հարգանք այլոց հանդեպ և վստահություն. պահանջվում է հարգանք ցուցաբերել բարձրագույն կրթության համակարգում ներգրավված բոլոր շահառուների և շահագրգիռ կողմերի արժանապատվության, ֆիզիկական, հոգեկան ու մտավոր ամբողջականության ու անձեռնմխելիության նկատմամբ⁵, ճանաչել Դերակատարների՝ իրենց մասնավոր կյանքը պաշտպանելու և ֆիզիկական ու հոգեբանական բռնությունից պաշտպանված լինելու ընդհանուր իրավունքները, միմյանց հետ հարաբերություններում դրսևորել համապատասխան վարքագիծ՝ աշխատանքային գործունեության մեջ ճիշտ համագործակցություն և կոլեգիալություն ապահովելու համար: Այլոց նկատմամբ հարգանքին զուգահեռ կարևոր է պահպանել վստահություն միմյանց նկատմամբ, բոլոր Դերակատարները պետք է վստահ լինեն այլոց ազնվության, ճշմարտացիության և բարեվարքության նկատմամբ և ակնկալեն նրանց վստահությունն իրենց նկատմամբ:

Ակադեմիական աշխատակազմը պետք է հարգանք ցուցաբերի ուսանողների դասավանդման և ուսուցման փոխհարաբերություններում, գործընկերների հետ գործնական հարաբերություններում, ունենա փոխադարձ վստահություն սկադեմիական համայնքի բոլոր անդամների նկատմամբ, խթանի գաղափարների ազատ փոխանակումը, ստեղծագործական մտքի և անձի զարգացումը: Ակադեմիական աշխատակազմը պետք է ապահովի, որ գործընկերների,

⁵ Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթության էթիկական արժեքների և սկզբունքների բուխարեստյան հռչակագիր (ՅՈՒՆԵՍԿՕ-ՄԵՊԵՍ, 2004թ.)

ուսանողների և մյուս Դերակատարների միջև փոխհարաբերությունները հիմնված լինեն վստահության սկզբունքի վրա:

Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Դերակատարներն իրենց իրավասություններն իրականացնելիս պետք է հարգանք ցուցաբերեն աշխատակիցների նկատմամբ, պահպանեն նրանց իրավունքները, ցուցաբերեն առանց խտրականության, թափանցիկ և հավասար վերաբերմունք նրանց նկատմամբ, վստահեն նրանց և ապահովեն նրանց վստահությունն իրենց նկատմամբ:

Ուսանողները պետք է հարգանք ցուցաբերեն այլ ուսանողների և Մասնաճյուղի աշխատակազմի (ակադեմիական և ոչ ակադեմիական) հետ իրենց հարաբերություններում: Այն պետք է կիրառեն իրենց ուսումնառության բոլոր տեսակի գործընթացներում, բուհական կյանքին առնչվող բոլոր տեսակի աշխատանքներում: Ուսանողական կառույցների ղեկավար ներկայացուցիչներն այդ մարմինների բոլոր գործողություններում պետք է ապահովեն հարգանք այլոց նկատմամբ: Ուսանողները պետք է վստահեն բուհի աշխատակազմին ու մյուս ուսանողներին և իրենց վարքագծով նրանց մեջ առաջացնեն վստահություն իրենց նկատմամբ:

3.5. Հաշվետվողականություն. բոլոր Դերակատարներից պահանջում է պատասխանատվություն կրել իրենց լիազորությունները պատշաճ կատարելու համար: Հաշվետվողականությունը կլինի ավելի ամուր հիմքերի վրա, եթե բոլոր Դերակատարները հարգում և վստահում են միմյանց:

Ակադեմիական աշխատակազմը ինստիտուցիոնալ հիերարխիայի շրջանակներում հաշվետու է տարբեր վերադաս գործընկերների և մասնագիտական մարմինների առջև (ղեկավար և կառավարման մարմիններ): Հաշվետվողականությունը ակադեմիական աշխատակազմի համար մի կողմից ենթադրում է «ակադեմիական ազատության» հնարավորություն, մյուս կողմից «ակադեմիական ազատությունը» կարող է լինել հաշվետվողականության ձև, այսինքն՝ հաշվետվողականության հետապնդում սեփական աշխատանքի մեջ և սեփական անձի առջև:

Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Դերակատարները կամային հիմունքներով պարտավոր են պատասխանատվություն կրել իրենց լիազորությունների պատշաճ կատարման համար և ապահովել Մասնաճյուղում սահմանված «վերից վար, վարից վեր» կրթական, գիտական և ֆինանսական գործունեության հաշվետվողականությունը /ԵՊՀ ԻՄ ղեկավար պաշտոն զբաղեցնող աշխատակիցներն իրենց կողմից սահմանված կարգով հաշվետու են ԵՊՀ ԻՄ ակադեմիական աշխատակազմին և ուսանողներին/⁶:

Ուսանողները «լիազորություններ» չունեն, սակայն այն ուսանողները, որոնք մասնակցում են Մասնաճյուղի կառավարման գործընթացներին, պետք է հաշվետու լինեն ուսանողական կառույցների առաջ, որոնց իրենք ներկայացնում են: Ուսանողները կարող են որոշակի հաշվետվողականություն ունենալ Մասնաճյուղի այն աշխատակազմի նկատմամբ, որը կապված է իրենց ուսումնական առաջադիմության և վարքագծի դրսևորման հետ:

3.6. Արդարացիություն. Դերակատարներից պահանջում է միմյանց հետ փոխհարաբերություններում դրսևորել անկողմանակալ, անաչառ, կանխատեսելի, առանց խտրականության, ազնիվ և օբյեկտիվ վարքագիծ: Այն պետք է լինի Մասնաճյուղի բոլոր Դերակատարների նպատակը:

Ակադեմիական աշխատակազմը դասավանդման, ուսանողների գնահատման, հետազոտության, Դերակատարների առաջխաղացման հետ կապված ցանկացած գործընթացում պետք է ապահովի արդարացիություն՝ հիմնվելով թափանցիկ, անկողմանակալ, կանխատեսելի, հետևողական և օբյեկտիվ չափանիշների վրա:

Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Դերակատարները պետք է ցուցաբերեն արդարացիություն բոլոր աշխատակիցների և ուսանողների հետ փոխհարաբերություններում (օրինակ՝ արդարացիություն աշխատակազմի համալրման հարցում, Մասնաճյուղի հասանելիության ընդլայնում ուսանողների համար և այլն): Նրանք պետք է նախաձեռնեն Մասնաճյուղում արդարացիությունը

⁶ Տե՛ս ԵՊՀ ԻՄ կանոնադրությունը և ներքին կարգապահական կանոնները:

մեծացնելուն ուղղված քաղաքականությունների և տարբեր կանոնակարգերի մշակումը և ապահովեն դրանց իրականացումը:

Ուսանողները պետք է դրսևորեն արդարացիություն համակուրսեցիների և Մասնաճյուղի աշխատակազմի (ակադեմիական և ոչ ակադեմիական) հետ հարաբերություններում: Ուսանողական կառույցների ներկայացուցիչները պետք է իրենց պարտավորությունները կատարեն՝ պահպանելով մյուսների նկատմամբ արդարացիության սկզբունքը, և անհարկի չանտեսեն մյուսներին ներկայացուցչական տարբեր առաջնահերթություններ որոշելիս:

3.7. Հավասարություն, արդարություն և սոցիալական արդարություն. Բոլոր Դերակատարներից պահանջում են ապահովել կայունության, հավասարության և արդարության կրթական և սոցիալական արժեքները, ինչպես նաև ճանաչել ապագա և ներկա սերունդների իրավունքներն ու պարտականությունները, գործնականում կիրառել արդար, թափանցիկ, ներառական և կայուն քաղաքականություն և գործելակերպ՝ ներառելով բարձրագույն կրթության հասանելիությունը ակադեմիական որակավորում ունեցող հնարավորինս մեծ քանակի անձանց համար՝ անկախ տարիքից, հաշմանդամությունից, ռասայից, էթնիկ պատկանելությունից, կրոնական դավանանքից: Բոլոր Դերակատարները հավասարության, արդարության և սոցիալական արդարության նշված հայեցակետերը պետք է դիտարկեն որպես իրենց նկատմամբ գործող սկզբունքներ: **Հավասարությունն** իր իմաստով մոտ է արդարացիությանը և ընդլայնվելով կարող է ընդգրկել արդարություն, մասնավորապես՝ սոցիալական արդարություն գաղափարը:

Սոցիալական արդարությունը բացառում է խտրականությունը և պահանջում է պայքարել ռասիզմի, կոդմնակալության և խտրականության կամայական դրսևորման դեմ:

Ակադեմիական աշխատակազմը իր բոլոր գործընթացներում պետք է դրսևորի հավասարության, արդարության և սոցիալական արդարության սկզբունքներին համահունչ գործունեություն ուսանողների և գործընկերների հետ բոլոր

փոխհարաբերություններում: Ակադեմիական աշխատակազմը պետք է պատրաստակամ մասնակցի Մասնաճյուղի հասանելիության ապահովման բոլոր տեսակի նախաձեռնություններին, մասնավորապես՝ ուսանողների հավաքագրման, ուսումնառության ծրագրերում ուսանողների առաջընթացին խանգարող խոչընդոտների հաղթահարման, սոցիալական կամ մասնակցային ժողովրդավարության բնագավառում հաստատությանը օժանդակելու և այլն:

Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Դերակատարները հատուկ պատասխանատվություն են կրում համապատասխան քաղաքականությունների մշակման, բարեհաջող ներդրման և մշտադիտարկման համար:

Ուսանողները պատասխանատվություն չեն կրում Մասնաճյուղի հասանելիության ապահովման, քաղաքականությունների մշակման և իրականացման համար, սակայն նրանք պետք է հստակ ձևով դրսևորեն ոչ խտրական և անկողմնակալ վերաբերմունք համակուրսեցիների և Մասնաճյուղի աշխատակիցների հետ փոխհարաբերություններում, տեսնեն իրենց առաջընթացը Մասնաճյուղի՝ կրթությանն ուղղված սոցիալական կամ մասնակցային ժողովրդավարության համատեքստում:

3.8. Կրթական համակարգի և կրթական հաստատությունների ժողովրդական և էթիկական ղեկավարում և կառավարում. պահանջում է, որ բոլոր Դերակատարները ընդունեն, որ Մասնաճյուղի ղեկավարումը և կառավարումը պետք է հիմնված լինեն ժողովրդավարական ներգրավվածության վրա և իրականացվեն էթիկայի հիմունքներով ղեկավարվող առաջնորդների կողմից: Իսկ աշխատակիցների ներգրավվածությունը բարձրացնելու համար պետք է որոշումների կայացման մեջ կարևորել բոլոր Դերակատարների (աշխատակիցների և սովորողների) մասնակցության խրախուսումը ղեկավար անձնակազմի կողմից:

Ակադեմիական աշխատակազմն իր վարքագծում պետք է ցուցաբերի Մասնաճյուղի ժողովրդավարական ղեկավարմանն ու կառավարմանն աջակցելու լիարժեք հանձնառություն:

Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Դերակատարներն ունեն կոնկրետ պարտավորություն՝ ապահովելու Մասնաճյուղի ղեկավարումը և կառավարումը ժողովրդավարական, նաև էթիկական հիմունքներով՝ հենված աշխատակազմի լիարժեք ներգրավվածության վրա:

Ուսանողները պետք է դրականորեն արձագանքեն Մասնաճյուղի ղեկավարմանը և կառավարմանը մասնակցելու ցանկացած հնարավորությանը, նրանք պետք է լիարժեք մասնակցություն ունենան կրթության որակի ապահովման և բարելավման գործընթացներում, որպեսզի կարողանան հետադարձ կապ ապահովել դասավանդման և ուսումնառության վերաբերյալ: Ուսանողական կառույցների ներկայացուցիչներն իրենց պաշտոններում պետք է ապահովեն էթիկայի նորմերին համապատասխան վարքագիծ և հենվեն տվյալ մարմնի ժողովրդավարական հիմունքներով մասնակցության վրա:

3.9. Որակյալ կրթություն. պահանջում է յուրաքանչյուր Դերակատարի անվերապահ հանձնառությունը տրամադրել և ձեռք բերել հնարավորիս բարձր որակի կրթություն:

Ակադեմիական աշխատակազմից պահանջվում է Մասնաճյուղի ուսանողներին ապահովել հնարավորինս բարձր որակի կրթությամբ, նպաստել ուսանողների բարձր առաջադիմությանը, ապահովել գիտական և կրթական հնարավորինս բարձր արդյունքներ, ուսանողների հետ կատարել որակյալ, ճիշտ և ազնիվ ակադեմիական աշխատանք, ցուցաբերել ակտիվ մասնակցություն կրթության որակի բարելավման աշխատանքներում՝ այդպիսով նպաստելով իրենց մասնագիտական ոլորտում գիտելիքի առավելագույն հնարավոր զարգացմանը:

Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Դերակատարները որակյալ կրթության ապահովման բոլոր հայեցակետերի համար պետք է մշակեն համապատասխան քաղաքականություններ և ընթացակարգեր, ապա աջակցեն դրանց իրականացմանը և միջոցներ ձեռնարկեն անհրաժեշտ ռեսուրսների տրամադրման համար:

Ուսանողները պետք է լրջորեն հանձն առնեն իրենց ակադեմիական աշխատանքը կատարել որակով՝ դրանով մասնակից դառնալով գիտելիքի ձեռքբերման և տարածման՝ Մասնաճյուղի հիմնական սկզբունքին: Նրանք պետք է հանձն առնեն որակի գնահատման և բարձրացման գործընթացներում մասնակցության միջոցով բարելավել Մասնաճյուղում կրթության ընդհանուր որակը:

3.10. Անձի կատարելագործում և համակարգերի բարելավում. կարևորում են բարձրագույն կրթության համակարգի շարունակական բարելավումը, ակնկալում են Մասնաճյուղի կրթական համակարգի զարգացման գործում բոլոր Դերակատարների կողմից առավելագույն ներդրում: Որպես մասնագիտական պարտավորություն՝ Մասնաճյուղի համար կարևորվում են մասնագիտական զարգացման միջոցով անձի կատարելագործման ձգտումը, Մասնաճյուղի գործունեության բարելավումը:

Ակադեմիական աշխատակազմի յուրաքանչյուր անդամ պետք է մասնագիտական պարտավորություն կրի իր անձնական զարգացման, դասավանդման առաջավոր փորձի ներդրման և տարածման համար, ապահովի կապը իր մասնագիտական ոլորտի գիտական նվաճումների, իր զարգացման և Մասնաճյուղի ընթացիկ զարգացումների միջև:

Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Դերակատարները պետք է պարտավորություն ունենան՝ կատարելագործելու իրենց ղեկավարման և կառավարման հմտությունները, կրթության որակի բարձրացման համար նորամուծությունների ներմուծմամբ և փոփոխություններին ընդառաջ գնալով՝ ձգտեն, որ իրենց անձնական կատարելագործումը ինստիտուցիոնալ, ազգային և միջազգային մակարդակներում առավելագույնս նպաստի Մասնաճյուղի բարելավմանը:

Ուսանողները անձնական կատարելագործման և համակարգային բարելավման պարտավորություն չունեն, սակայն պետք է արժևորեն Մասնաճյուղի ընդհանուր համակարգային կատարելագործումը, օգտագործեն անձի կատարելագործման համար ընձեռնված բոլոր հնարավորությունները և ձգտեն օժանդակել դրան:

3.11. Ինստիտուցիոնալ ինքնավարություն/ինստիտուցիոնալ անկախություն. պահանջում

են ճանաչել ազգային կրթական համակարգում առանձին հաստատություններին համապատասխան ինքնավարություն և անկախություն շնորհելու և այն պահպանելու անհրաժեշտությունը, ինչը կբացառի կրթության նկատմամբ չափազանց կենտրոնացված քաղաքական հսկողությունը: Այն խիստ կապված է ակադեմիական ազատության կարևորության հետ, հետևաբար բոլոր Դերակատարները անհրաժեշտության դեպքում պետք է իրենց հնարավորությունների և դերակատարումների շրջանակներում ներգրավվեն Մասնաճյուղի ինստիտուցիոնալ ինքնավարության/ինստիտուցիոնալ անկախությանը հասնելու աշխատանքներում:

Ակադեմիական ամբողջ աշխատակազմը անհրաժեշտության դեպքում պետք է մասնակցի ինստիտուցիոնալ ինքնավարության/ինստիտուցիոնալ անկախության հասնելու և պահպանելու խնդրի հանրային քննարկմանը և այդ գործում ստանձնի ղեկավար դեր: Համապատասխան ինստիտուցիոնալ ինքնավարություն/ինստիտուցիոնալ անկախություն ձեռք բերելու դեպքում ակադեմիական աշխատակազմը պետք է ձևավորի այն գիտակցությունը, որ Մասնաճյուղը պարտավորություններ ունի հասարակության լայն շրջանակների առջև:

Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Դերակատարները պետք է արժևորեն այդ ինքնավարությունը/անկախությունը և իրենց գործառույթները կատարեն լիարժեք և գիտակցված, որպեսզի դիմակայեն այդ խնդրին առնչվող յուրաքանչյուր միջամտության: Կարևոր է, որ նրանք իրենց ղեկավարումն ու կառավարումն իրականացնեն՝ ընդունելով Մասնաճյուղի ակադեմիական աշխատակազմի համապատասխան ինքնավարությունը/անկախությունը:

Ուսանողները պետք է միակարծիք կարևորեն Մասնաճյուղի կենտրոնացված քաղաքական հսկողությունից զերծ ինստիտուցիոնալ ինքնավարություն/ինստիտուցիոնալ անկախությունը, իսկ ուսանողական կառույցներում նրանց ներկայացուցիչները պարտավոր են համապատասխան ինքնավարություն/անկախությունը ներկայացնել հանրային քննարկման:

3.12. Միջազգային համագործակցություն. բոլոր Դերակատարներից պահանջում է ճանաչել կրթական գործունեության մեջ միջազգային դրական համագործակցության կարևորությունը, որի հիմնական խթանիչը պետք է լինի առանց շահադիտական նպատակների համագործակցությունը:

Ակադեմիական ամբողջ աշխատակազմի դասավանդման, գիտական և հետազոտական գործունեությունը պետք է հիմնված լինի մասնագիտական համապատասխան ոլորտներում միջազգային մտածելակերպի ընդգրկվածության վրա: Այն պետք է ապահովի, որ Մասնաճյուղի ուսանողները արդյունավետ կերպով հաղորդակից լինեն միջազգային ժամանակակից մտածելակերպին, նրանց համար նախաձեռնի և ստեղծի միջազգային համաժողներին մասնակցության ու միջազգային փոխանակման հնարավորություններ, փնտրի ռեսուրսներ՝ դրանց աջակցելու համար: Նա պետք է նախաձեռնի և գտնի միջազգային համագործակցության հնարավորություններ՝ աջակցություն փնտրելով Մասնաճյուղի ղեկավար և կառավարման մարմիններում:

Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Դերակատարները պարտավոր են խթանել միջազգային համագործակցության բոլոր այն հնարավորությունները, որոնք ներգրավում են Մասնաճյուղի ակադեմիական աշխատակազմին և ուսանողներին: Իսկ դա նշանակում է, որ Մասնաճյուղում պետք է իրականացվեն կրթության որակի միջազգային չափանիշներին համապատասխան կրթական ծրագրեր: Կարևոր է, որ Մասնաճյուղի ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Դերակատարները խուսափեն շահադիտական նպատակ հետապնդող միջազգային համագործակցությունից:

Ուսանողները պետք է ձգտեն դառնալ մասնագիտական ոլորտի միջազգային համագործակցության անդամներ՝ ինտեգրվելով միջազգային հեռանկարներին: Նրանք պետք է ցանկություն դրսևորեն՝ մասնակցելու միջազգային փոխանակման ծրագրերի, ուսումնական այցերի և այլ միջոցառումների: Ուսանողական կառույցների ներկայացուցիչները պետք է հետևողական լինեն, որ Մասնաճյուղը միջազգային համագործակցության շատ հնարավորություններ առաջարկի՝

հատկապես փոխանակման, ուսումնական և այլ այցերի ձևով: Մասնաճյուղային, ազգային և միջազգային տարբեր մակարդակներում նրանք պետք է բավարար ռեսուրսներ պահանջեն՝ ուսանողների համար նման հնարավորությունները հիմնավորելու համար:

4. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիական ազնվությունը էթիկայի հիմնարար սկզբունքներից մեկն է: Ակադեմիական ազնվության համակարգը ակադեմիական գործընթաց է, որը հիմնվում է կրթական հնարավորությունների վրա, և ոչ իրավաբանական գործընթաց է: Ակադեմիական ազնվության պահպանումը Մասնաճյուղի բոլոր Դերակատարների համար պետք է դառնա պատվի կանոն. «Ես լինելու եմ ակադեմիապես ազնիվ իմ բոլոր ակադեմիական աշխատանքներում և չեմ հանդուրժելու այլ անձանց ակադեմիական անազնվությունը»:

4.1. Ակադեմիական ազնվությունը սահմանվում է որպես հինգ հիմնարար արժեքների՝ **ազնվության, վստահության, անկեղծության, հարգանքի և պատասխանատվության** պահպանման պարտավորություն՝ անկախ իրավիճակից:

4.2. Ակադեմիական ազնվությունն անհրաժեշտ է Մասնաճյուղի առաքելության և հիմնական նպատակների արդյունավետ իրականացման, համալսարանի կառուցվածքը և ամբողջությունը պահպանելու, ազնիվ և փոխադարձ վստահության մթնոլորտի ապահովման, դասական համալսարանական միջավայրի ձևավորման և որակյալ կրթական ծառայությունների տրամադրման համար:

4.3. Ակադեմիական ազնվությունն նշանակում է կատարել բոլոր ակադեմիական աշխատանքներն առանց գրագողության, խաբեության, ստելու, խարդախության, գողության, առանց այլ անձանցից արգելված օգնություն ստանալու կամ տեղեկատվության ցանկացած հանրամատչելի աղբյուրից օգտվելու: **Ակադեմիական աշխատանքը** ցանկացած գործողություն է, որը կատարվել է այն աշխատանքի համար, որը ներկայացվել է կամ ներկայացվելու է որպես սեփական

գործունեության արդյունք: Ուսանողների համար ակադեմիական աշխատանքը Մասնաճյուղի կրթական ծրագրերի և դասընթացների համար որպես ակադեմիական առաջադիմության արդյունք ներկայացված ցանկացած աշխատանքն է: **Ակադեմիական աշխատանքներ են** համարվում (սակայն ներկայացվածներով չեն սահմանափակվում) ավարտական և կուրսային աշխատանքները, լսարանային և տնային առաջադրանքները, քննությունները, ստուգաքնները, կիսամյակային տարբեր ինքնուրույն և թեմատիկ աշխատանքները, հաշվետվությունները, ներկայացումները, ստեղծագործական աշխատանքները, լաբորատոր աշխատանքները և գիտահետազոտական փորձերը, հաշվարկները, պրակտիկայի շրջանակներում ըստ պլանի կատարված աշխատանքները, թեզերը և այլն: Դրանք կարող են լինել գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային:

4.4. Ակադեմիական ազնվություն է համարվում՝

- 4.4.1. քննական աշխատանքների անցկացման ընթացքում ազնիվ և պատշաճ պահվածքը,
- 4.4.2. գիտական և գիտահետազոտական աշխատանքներում մտքերի, գաղափարների իրական հեղինակներին նշելը,
- 4.4.3. իրական (ոչ կեղծ) հետազոտական արդյունքներով հիմնավորված աշխատանքի ստեղծումը,
- 4.4.4. մտավոր սեփականության բոլոր տեսակների պաշտպանությունը:

5. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

- 5.1. **Ակադեմիական անազնվություն՝** նշանակում է դիտավորյալ կերպով կատարել, կամ փորձել կատարել, կամ օգնել այլ անձին կատարելու ցանկացած ակադեմիական աշխատանք (սահմանումը վերևում), կամ դրսևորել վարքագիծ, որը չի համապատասխանում ակադեմիական ազնվության չափորոշիչներին:
- 5.2. **Ակադեմիական անազնվություն է համարվում՝**

5.2.1. գրագողությունը, որն առանց համապատասխան աղբյուրի վկայակոչման ակադեմիական աշխատանքներում ոչ հանրամատչելի մտքեր, գաղափարներ, կարծիքներ կամ տեսություններ ընդգրկելն է: Գրագողություն է համարվում.

- ուրիշի ստեղծագործությունը, գաղափարները, հետազոտությունները և մտքերը որպես սեփականը ներկայացնելը կամ ուրիշի ստեղծագործության՝ իր անվամբ անօրինական հրապարակումը, այլ կերպ՝ հեղինակության յուրացումը,
- որևէ աշխատանքի մասնակի կամ ամբողջական ընդօրինակումը տարբեր աղբյուրներից, ինչպիսիք են՝ համացանցը, հոդվածները, գրքերը, ամսագրերը և այլն՝ առանց իրական հեղինակին և աղբյուրը նշելու,
- օգտագործված աղբյուրների և գրականության ցանկի ձևավորումը ակնհայտ խախտումներով,
- սխալ հղումներ տալը, երբ աշխատանքում «Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկում» ներառվում է գիրք, որին հեղինակն անձամբ չի ծանոթացել և աշխատանքում դրան հղում չի արել (ցանկում պետք է տիպաբանված ներկայացնել միայն աշխատանքում օգտագործված աղբյուրները, իսկ այն աղբյուրները, որոնք հեղինակի համար եղել են ներշնչանքի աղբյուր կամ իր հայացքների ձևավորման միջոց, պետք է ներկայացնել օգտագործված աղբյուրների ցուցակից առանձին ցուցակով, օրինակ՝ «Թեմատիկ գրականություն» վերնագրի տակ),
- այլ անձի կողմից կատարած աշխատանքի կամ այլ առաջադրանքների գնումը (կամ ձեռքբերումը) և որպես սեփական աշխատանք ներկայացնելը,
- վիճակագրական կամ դեմոգրաֆիական տեղեկություններ կրկնելը, որոնք հանրամատչելի չեն և սկզբնապես կազմվել են այլ անձի կողմից,
- նույն աշխատանքը որպես տարբեր առաջադրանքներ կամ տարբեր վերնագրերով աշխատանքներ ներկայացնելը:

5.2.2. արգելված աջակցությունը, որը դասախոսի կամ ուսանողի կողմից ցանկացած քննության կամ ակադեմիական աշխատանքի վերաբերյալ արգելված

աջակցության տրամադրումը կամ ստացումն է: Արգելված աջակցություն են համարվում.

- քննությունների պատասխանների արտագրելը կամ արտագրել թույլատրելը,
- քննությունների ժամանակ տվյալ քննական նյութին վերաբերող տեղեկությունների փոխանցումը կամ ստացումը (բանավոր, գրավոր, նշանների կամ էլեկտրոնային ազդանշանների օգնությամբ կամ այլ կերպ),
- դեռ չանցկացված քննությունների պատասխանների տրամադրումը կամ ստացումը,
- քննության ընթացքում ծածկագրերից օգտվելը,
- գրավոր քննություններին նոր տեխնոլոգիաներից օգտվելը,
- այլ անձի փոխարեն ակադեմիական աշխատանքի կամ դրա մի մասի կատարումը կամ թույլատրելը, որ այլ անձ ուսանողի փոխարեն կատարի ակադեմիական աշխատանքը,
- խմբակային աշխատանքի ներկայացումը կամ ներկայացման թույլատրելը, երբ խմբակային աշխատանքի պատրաստմանը կամ կատարմանը ոչ բոլոր անդամներն են մասնակցել,
- էլեկտրոնային տարբեր սարքերի կիրառումը կամ թույլատրելը այն դեպքերում, երբ դրանց կիրառության հատուկ թույլտվություն չկա,
- աշխատանքի անբարեխիղճ կատարմանն աջակցելը,
- գնահատական ստանալու շուրջ ուսանողի և դասախոսի միջև համաձայնությունը, դասախոսին միջնորդումը (օրինակ դասախոսի, կոլեգայի կամ ղեկավարի միջոցով):

5.2.3. կեղծումը, որը ցանկացած ակադեմիական աշխատանքի կատարման համար կաշառելը կամ նրա կատարման վերաբերյալ կեղծ տեղեկատվության տրամադրումն է: Կեղծում են համարվում.

- ակադեմիական աշխատանքի անբավարար կատարման կամ չկատարման դեպքում կեղծ պատճառաբանությունների ներկայացումը,

- այլ գնահատական ստանալու նպատակով գնահատականների, պատասխանների կամ հաճախելիության գրանցումների փոփոխումը, այսինքն՝ ակադեմիական շահ ստանալու նպատակով ակադեմիական գրառումների և/կամ այլ փաստաթղթերի կեղծումը,
- ակադեմիական առաջադիմության համար արդեն ներկայացված ակադեմիական աշխատանքի ներկայացումը (նույնիսկ նույն ուսանողի կողմից), բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատանքը ներկայացվել է համապատասխան դասախոսի գիտությամբ կամ լրացնում է նախկինում կատարած աշխատանքը,
- ցանկացած ակադեմիական աշխատանքի ներկայացումից հետո նրա փոփոխելը, բացառությամբ այն դեպքերի, եթե նման փոփոխությունները մտնում են առաջադրանքի պահանջների մեջ (ինչպիսիք են՝ դասախոսի կամ ղեկավարի գիտությամբ տվյալ ակադեմիական աշխատանքի վերանայում),
- այլ սովորողի կամ ակադեմիական աշխատանքի վնասումը կամ կեղծումը,
- ցանկացած լաբորատոր կամ փորձնական աշխատանքի արդյունքների կամ ցանկացած տվյալների և տեղեկությունների կեղծումը,
- համակարգչային սարքավորումների (այդ թվում՝ տարբեր էլեկտրոնային կրիչների) կամ լաբորատոր սարքավորումների վնասումը ակադեմիական աշխատանքի գնահատումը փոփոխելու կամ կանխելու համար,
- այլ անձին պատկանող համակարգչային նշանաբառից օգտվելը,
- ինտերնետային կայքի բովանդակության կամ մատչելիության վնասումը,
- այլ անձի փոխարեն գործելը՝ համակարգչային ռեսուրսներ ձեռք բերելու նպատակով,

5.3. գողությունը, որը ակադեմիական ցանկացած աշխատանքի վերաբերյալ (ինչպիսիք են՝ քննությունները, գնահատականների գրանցումները, գնահատման ձևերը, գրքերը, լաբորատոր նյութերը, տվյալները և այլն) տեղեկությունների արգելված կերպով (գողանալով, վերցնելով, ստանալով, այլ անձի գրասենյակից կամ համակարգչից դուրս հանելով և այլն) ձեռք բերելն է:

5.4. ցանկացած այլ գործողությունը, որն անարդար ձևով առավելություն է տալիս աշխատակցին կամ ուսանողին և ազդում նրա արձանագրած արդյունքների վրա:

6. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 6.1.** Էթիկայի հանձնաժողովը կազմվում է ոչ պակաս քան 5 անդամից:
- 6.2.** Էթիկայի հանձնաժողովի գործունեության ժամկետի և կազմի հաստատումը, ինչպես նաև դրանց փոփոխություններն իրականացվում են ԵՊՀ ԻՄ խորհրդի կողմից:
- 6.3.** Հանձնաժողովի նախագահն ընտրվում է հանձնաժողովի անդամների կողմից՝ բաց քվեարկությամբ:
- 6.4.** Էթիկայի հանձնաժողովի կազմը կարող է փոփոխվել հետևյալ դեպքերում.
 - 1) հանձնաժողովի անդամի կամ անդամների՝ հանձնաժողովի կազմից դուրս գալու վերաբերյալ դիմումի համաձայն,
 - 2) հանձնաժողովի անդամներից որևէ մեկի կամ մեկից ավել անդամների ոչ պատշաճ աշխատանքի կամ ոչ օբյեկտիվ աշխատանքի վերաբերյալ հանձնաժողովի նախագահի զեկուցման համաձայն,
 - 3) հանձնաժողովի անդամների կամ նախագահի գործունեության վերաբերյալ Դերակատարների կողմից արձանագրված բողոքարկման համաձայն:
- 6.5.** Էթիկայի հանձնաժողովը բողոքների վերաբերյալ որոշումներ կայացնում է համաձայն սույն Կանոնագրքի, Մասնաճյուղի ներքին կարգապահական կանոնների և համապատասխան կանոնակարգերի:
- 6.6.** Էթիկայի հանձնաժողովն իր գործունեության ընթացքում պարտավորվում է ապահովել թափանցիկություն, օբյեկտիվություն, արդարամտություն և անաչառություն:
- 6.7.** Էթիկայի հանձնաժողովի անդամները պարտավոր են պահպանել գաղտնիություն ստացված բողոքների և դերակատարների վերաբերյալ:
- 6.8.** Էթիկայի հանձնաժողովի գործառույթներն են՝

1. հետևողական լինել Մասնաճյուղում էթիկայի կանոնների պահպանմանը,
 2. էթիկայի կամ ակադեմիական ազնվության խախտումների վերաբերյալ Դերակատարների բողոքների դեպքում իրականացնել համապատասխան գործողություններ՝ համաձայն սույն Կանոնագրքի,
 3. յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում մշտապես իրականացնել ուսումնասիրություններ (հետազոտություններ),
 4. տարեվերջին հետազոտությունների արդյունքների և էթիկայի կանոնների խախտման և դրանց լուծման վերաբերյալ Մասնաճյուղի տնօրենին ներկայացնել հաշվետվություն:
- 6.9.** Էթիկայի կանոնների խախտման առկայության դեպքի վերաբերյալ հանձնաժողովի կողմից կայացված որոշումը հանձնաժողովի նախագահը գրավոր կերպով ներկայացնում է Մասնաճյուղի տնօրենին:

7. ԵՊՀ ԻՍ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ, ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԷԹԻԿԱՅԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- 7.1. ՀՀ օրենսդրության համաձայն՝ Մասնաճյուղի նշանակված կամ ընտրված ղեկավար (այդ թվում՝ տնօրենի, ֆակուլտետների ղեկանների, վարչությունների պետերի, բաժինների վարիչների և ղեկավարման իրավասություն ունեցող անձնաց) և վարչական աշխատակազմի անդամների վարքագիծը պետք է համապատասխանի էթիկայի ընդհանուր սկզբունքներին:
- 7.2. ԵՊՀ ԻՍ տնօրենի իրավունքներն ու գործառույթները սահմանված են ՀՀ օրենքով, ԵՊՀ ԻՍ կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:
- 7.3. Մասնաճյուղի ղեկավարների իրավունքները սահմանված են ՀՀ օրենքով, ԵՊՀ ԻՍ կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:
- 7.4. Վարչական աշխատակազմի իրավունքներն ու գործառույթները սահմանված են «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ

Աշխատանքային օրենսգրքով, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ, ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

7.5. Մասնաճյուղի ղեկավարները և վարչական աշխատակազմի անդամները իրավունք ունեն էթիկայի սկզբունքների ցանկացած ենթադրյալ խախտման մասին գրավոր հայտնել վերադաս մարմնին՝ առանց իրենց անձի համար անբարենպաստ հետևանքներ առաջանալու մտավախության:

7.6. ԵՊՀ ԻՄ-ում **ղեկավար** պաշտոններ զբաղեցնող աշխատակիցները պարտավոր են՝

- 1) իրենց գործառույթները և պարտականություններն իրականացնելիս վեր դասել Մասնաճյուղի շահերն իրենց սեփական շահերից և չձգտել շահույթ ստանալ՝ օգտագործելով իրենց զբաղեցրած պաշտոնը,
- 2) չընդունել որոշակի գործելու կամ չգործելու որևէ հրահանգ ցանկացած անձից (բացառությամբ վերադասի) կամ որևէ քաղաքական կուսակցությունից, արհմիությունից կամ կրոնական խմբից,
- 3) կադրերի հետ կապված գործընթացներում (այդ թվում՝ աշխատակազմի նշանակման և առաջխաղացման), ֆինանսական, պայմանագրային և նման այլ հարցերում իրենց կամ իրենց ընտանիքի անմիջական անդամի որևէ անձնական շահի առկայության դեպքում գրավոր հայտնել վերադաս մարմնին,
- 4) չպահանջել կամ չընդունել որևէ կաշառք կամ այլ ֆինանսական միջոց, չփորձել ստանալ կամ ընդունել որևէ այլ անձնական օգուտ, որը կարող է ազդել իրենց հետագա գործունեության վրա,
- 5) կաշառելու կամ անձնական օգուտ առաջարկելու ցանկացած փորձի մասին անմիջապես հայտնել տնօրենին (իսկ տնօրենի դեպքում՝ վերադաս մարմնին),
- 6) չվատնել կամ սխալ չօգտագործել Մասնաճյուղի տնօրինության տակ գտնվող անձնական կամ առևտրային տեղեկությունները՝ անձնական կամ որևէ այլ անձի համար շահ ստանալու նպատակով,
- 7) իրենց ենթակայության տակ գտնվող աշխատողներին իրազեկել էթիկայի կանոնագրքի, համապատասխան օրենքների ու կանոնների, իրենց պարտականությունների և իրավունքների մասին,

- 8) ապահովել, որ իրենց իրավասության ներքո գտնվող բոլոր անձինք իրազեկ լինեն էթիկայի կանոնների և նորմերի չպահպանելու հետևանքներին, և նպաստել էթիկական վարվեցողության պահպանմանը,
- 9) իրականացնել ներքին աուդիտի կամ ռիսկերի կառավարման այնպիսի գործընթացներ, որոնք հնարավորություն կտան անդամներին համոզվելու, որ հաստատության ֆինանսական և մյուս գործերն իրականացվում են արդար, թափանցիկ, գործուն և արդյունավետ եղանակով,
- 10) հարգել Մասնաճյուղի բոլոր Դերակատարների արժանապատվությունը:

7.7. ԵՊՀ ԻՄ վարչական աշխատակազմի անդամները պարտավոր են.

- 1) վեր դասել Մասնաճյուղի շահերն իրենց սեփական շահերից և չձգտել շահույթ ստանալ պաշտոնական դիրքի օգտագործմամբ կամ չարաշահելով այն,
- 2) պարտականությունների իրականացման ժամանակ լինել ազատ, անաչառ, անկաշկանդ, չընդունել որոշակի եղանակով գործելու կամ չգործելու հրահանգ՝ ցանկացած անձի (բացառությամբ վերադասի և մասնաճյուղի տնօրենի), այլ կազմակերպության, քաղաքական որևէ կուսակցության, արհմիության, կրոնական կամ որևէ այլ արտաքին աղբյուրի կողմից,
- 3) քննարկման ենթակա օրակարգային հարցերում (ներառյալ՝ կադրերի բաժնի կողմից աշխատակիցների նշանակման և առաջխաղացման, ֆինանսական, պայմանագրային և այլ համապատասխան հարցերը) իրենց կամ իրենց ընտանիքի անմիջական անդամի որևէ անձնական շահի առկայության դեպքում հայտնել այդ մասին նախքան քննարկման սկիզբը և պաշտոնապես հրաժարվել այդ հարցերի քննարկմանը մասնակցելուց,
- 4) չպահանջել կամ չընդունել որևէ կաշառք կամ այլ ֆինանսական միջոց, կամ չփորձել ստանալ կամ ընդունել որևէ այլ անձնական օգուտ, որը կարող է ազդեցություն գործել իրենց հետագա գործունեության վրա որոշումներ կայացնելիս,
- 5) կաշառելու կամ անձնական օգուտ առաջարկելու ցանկացած փորձի մասին անմիջապես հայտնել անմիջական ղեկավարին,

- 6) Մասնաճյուղի կառավարման և ղեկավարման հետ կապված կանոններ ընդունելու և կիրառելու իրենց կոլեկտիվ իրավասությունը կամ անձնական պատվիրակված իրավասությունն իրականացնելիս ապահովել, որ այդ կանոնները համապատասխանեն գործող օրենսդրությանը, Մասնաճյուղի կանոնադրությանը և կանոնագրքում սահմանված էթիկայի սկզբունքներին,
- 7) հարգել Մասնաճյուղի աշխատակիցների և սովորողների արժանապատվությունը:

8. ԵՊՀ ԻՄ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ (ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ

ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ) ԷԹԻԿԱՅԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- 8.1.** ՀՀ օրենսդրության համաձայն՝ Մասնաճյուղի նշանակված կամ ընտրված ակադեմիական աշխատակազմի անդամների վարքագիծը պետք է համապատասխանի էթիկայի ընդհանուր սկզբունքներին:
- 8.2.** ԵՊՀ ԻՄ ակադեմիական աշխատակազմի իրավունքները սահմանված են ՀՀ օրենքով, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:
- 8.3.** ԵՊՀ ԻՄ ակադեմիական աշխատակազմի աշխատանքի նշանակումը, առաջխաղացումը և աշխատանքից ազատումը իրականացվում է «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման» ընթացակարգով:
- 8.4.** ԵՊՀ ԻՄ **ակադեմիական աշխատակազմի** անդամներն իրավունք ունեն.
 - 1) ազատորեն արտահայտվելու և տեղեկություն ստանալու,
 - 2) գնահատվելու որպես գիտնական և դասավանդող՝ ելնելով մտավոր և մասնագիտական չափանիշներից, առանց իրենց քաղաքական ու կրոնական հայացքների կամ անձնական նախապատվության որևէ այլ հանգամանքի,

- 3) որոշելու իրենց կողմից դասավանդվող դասընթացի բովանդակությունը, կազմակերպման և մատուցման ձևը՝ ուսումնական պլանների պահանջներին համապատասխան,
- 4) գնահատելու ուսանողների կատարողականը և ձեռքբերումները՝ համալսարանի գնահատման քաղաքականությունների և նախապես սահմանված գնահատման չափանիշների հիման վրա,
- 5) չընդունելու որոշակի ձևով գործելու կամ չգործելու որևէ հրահանգ ցանկացած անձից (բացառությամբ՝ վերադասի կամ մասնաճյուղի տնօրենի), որևէ քաղաքական կուսակցությունից, արհմիությունից կամ կրոնական խմբից, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,
- 6) էթիկայի սկզբունքների ցանկացած ենթադրյալ խախտման մասին գրավոր հայտնելու հանձնաժողովին՝ առանց իրենց անձի համար անբարենպաստ հետևանքներ առաջանալու մտավախության:

8.5. ԵՊՀ ԻՄ ակադեմիական աշխատակազմի անդամները պարտավոր են.

- 1) վեր դասել Մասնաճյուղի շահերը սեփական շահերից և չձգտել շահույթ ստանալ՝ օգտագործելով իրենց պաշտոնը՝ գործող օրենսդրությանը հակառակ,
- 2) Մասնաճյուղի ներսում կամ դրանից դուրս ցանկացած անձից կամ խմբից չպահանջել կամ չնդունել կաշառք կամ որևէ այլ անօրինական ֆինանսական միջոց, չփորձել ստանալ կամ ընդունել որևէ անձնական օգուտ, որը կարող է ազդել իրենց հետագա գործունեության վրա, և Մասնաճյուղի կանոններով նախատեսված համապատասխան մարմնին անմիջապես հայտնել կաշառելու կամ անձնական շահ առաջարկելու ցանկացած փորձի մասին,
- 3) չվատնել Մասնաճյուղի ռեսուրսները, կամ սխալ չօգտագործել Մասնաճյուղի տնօրենության տակ գտնվող անձնական կամ առևտրային տեղեկությունները, այդ թվում՝ մտավոր սեփականության մասին տեղեկությունները՝ անձնական կամ որևէ այլ անձի կամ խմբի համար շահ ստանալու նպատակով,
- 4) դրսևորել էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքներին համապատասխան վարքագիծ ակադեմիական աշխատակազմի կամ

ընդունելության, գնահատման, քննության և ուսանողներին վերաբերող այլ գործողությունների հետ առնչվող մարմինների նշանակման, առաջխաղացման կամ այլ լիազորություններին վերաբերող հարցերում մասնակցություն ցուցաբերելու ժամանակ,

- 5) ցուցաբերել հարգանք աշխատակիցների հետ փոխհարաբերություններում՝ անկախ տարիքից և զբաղեցրած պաշտոնից,
- 6) չհետապնդել գործընկերներին և նրանց նկատմամբ չդրսևորել խտրականություն, հարգել բազմակարծությունը և արտահայտվելու ազատությունը,
- 7) հետազոտական գործունեության ընթացքում պահպանել ակադեմիական ազնվության կանոնները և էթիկայի սկզբունքները՝ անձնական տվյալների պաշտպանության առումով,
- 8) ապահովել իրենց ենթակայության ներքո աշխատող բոլոր անձանց իրազեկ լինելը համապատասխան օրենսդրությանը և կանոններին, դրանք չպահպանելու հետևանքներին և նպաստել էթիկական վարվեցողության պահպանմանը:

8.6. ԵՊՀ ԻՄ դասախոսը, բացի ակադեմիական աշխատակազմին վերաբերվող պարտավորություններից, պարտավոր է նաև.

1. հարգել Մասնաճյուղի ուսանողներին՝ անկախ նրանց միջև եղած տարբերություններից (ներառյալ քաղաքական և կրոնական), և խուսափել ցանկացած շահագործումից, հետապնդումից և ուսանողների նկատմամբ խտրական վերաբերմունքից,
2. պաշտպանել ուսանողների ակադեմիական ազատությունը,
3. պահպանել փոխադարձ հարգանքի և վստահության սկզբունքը ուսանող – դասախոս փոխհարաբերություններում,
4. պահպանել օբյեկտիվություն, ճշմարտացիություն և ազնվություն յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ,
5. չթելադրել և չպարտադրել ուսանողին սեփական կամքը և հայացքները,

6. ուսանողի հետ չգնալ որևէ համաձայնության, ինչը կարող է դրսևորվել որպես ակադեմիական ազնվության խախտում,
7. պահպանել ակադեմիական ազնվությունը և հետամուտ լինել դրա մակարդակի բարձրացմանը,
8. որպես կրթական ծրագրերի ղեկավար՝ ուսանողներին իրազեկել էթիկայի կանոնադրքի, իրենց պարտականությունների և իրավունքների մասին:

9. ԵՊՀ ԻՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- 9.1. ՀՀ օրենսդրության համաձայն՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ ընդունված ուսանողների վարքագիծը պետք է համապատասխանի էթիկայի ընդհանուր սկզբունքներին, և այդ սկզբունքները պետք է կիրառելի լինեն Մասնաճյուղի բոլոր Դերակատարների հետ հարաբերություններում:
- 9.2. ԵՊՀ ԻՄ ուսանողների իրավունքները սահմանված են ՀՀ օրենքով, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ, կրթության մասին պայմանագրով, ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:
- 9.3. ԵՊՀ ԻՄ **ուսանողն** իրավունք ունի.
 - 1) զերծ մնալու այլ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքից՝ անկախ ռասայից, կրոնից, էթնիկ ծագումից, քաղաքական հայացքներից, տարիքից, սեռից, հաշմանդամության կամ անձնական բնույթի այլ հանգամանքից,
 - 2) ազատ արտահայտվելու և մասնակցելու հավաքներին՝ առանց դասերի արդյունավետ իրականացմանը խոչընդոտելու, էթիկայի սկզբունքները խախտելու, այն է՝ հարգանք այլոց իրավունքների և ՀՀ օրենքների նկատմամբ,
 - 3) տեղեկացված լինելու գնահատման չափանիշների մասին՝ ԵՊՀ ԻՄ կրթական քաղաքականությանը համապատասխան,
 - 4) տեղեկացված լինելու ԵՊՀ ԻՄ կանոնադրությանը և իրենց իրավասություններին և պարտավորություններին առնչվող ցանկացած իրավական նորմերի մասին,

- 5) բողոքարկելու՝ բուհի բողոքարկման քաղաքականության համաձայն,
- 6) զերծ լինելու բուհի ցանկացած անդամի հետապնդումից,
- 7) արտահայտվելու, եթե որոշում է կայացվում իր դեմ,
- 8) օրենսդրության կամ էթիկայի սկզբունքների ցանկացած ենթադրյալ խախտման մասին հայտնելու համապատասխան մարմնին՝ առանց իր համար անբարենպաստ հետևանքներ առաջանալու մտավախության:

9.4. ԵՊՀ ԻՄ ուսանողը պարտավոր է.

- 1) ծանոթանալ սույն Կանոնագրքին և Մասնաճյուղի գործունեությունը որոշող քաղաքականություններին և կանոնակարգող փաստաթղթերին,
- 2) Մասնաճյուղի ներսում կամ դրանից դուրս ցանկացած անձի կամ խմբի առնչությամբ չառաջարկել կամ չընդունել կաշառք կամ որևէ այլ անօրինական ֆինանսական միջոց, չփորձել ստանալ կամ չստանալ որևէ այլ անձնական օգուտ, որը կարող է ազդեցություն գործել իր ուսման կամ այլ անձանց աշխատանքի վրա,
- 3) Մասնաճյուղի կանոնների համաձայն՝ համապատասխան մարմնին անմիջապես հայտնել կաշառելու կամ անձնական օգուտ ստանալու ցանկացած փորձի մասին,
- 4) չվատնել Մասնաճյուղի ռեսուրսները կամ ոչ իրավաչափ ձևով չօգտագործել նրա տնօրինության ներքո գտնվող անձնական կամ առևտրային, այդ թվում՝ մտավոր սեփականության մասին տեղեկությունները՝ անձնական շահ ստանալու նպատակով կամ ի շահ որևէ այլ անձի կամ խմբի,
- 5) ցուցաբերել հարգալից վերաբերմունք կառավարման խորհրդի, ղեկավարների, ակադեմիական և օժանդակ աշխատակազմի և մյուս ուսանողների նկատմամբ՝ պահպանելով էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքները, և դրական ու կառուցողական ներդրում ունենալ հաստատության ակադեմիական գործունեության մեջ,
- 6) ուսման կամ հետազոտական գործունեության ընթացքում պահպանել ակադեմիական ազնվության կանոնները և էթիկայի սկզբունքները,

- 7) չարտագրել այլոց աշխատանքը կամ չփորձել ձեռք բերել որևէ արտոնություն՝ ցանկացած ձևով դա խթանելու միջոցով,
- 8) ուսումնառության ընթացքում դրսևորել արժանապատիվ, ազնիվ և ճշմարիտ վարքագիծ,
- 9) զերծ մնալ այնպիսի արտահայտություններից կամ արարքներից, որոնք կարող են որևէ կերպ բացասական ազդեցություն ունենալ ԵՊՀ ԻՄ ուսանողների և աշխատակիցների արժնապատվության վրա:

10. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՏՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

- 10.1. ԵՊՀ ԻՄ յուրաքանչյուր Դերակատար իր աշխատանքային կամ ուսումնական գործունեության ընթացքում էթիկայի կանոնները չպահպանելու դեպքում ենթարկվում է կարգապահական տույժի:
- 10.2. ԵՊՀ ԻՄ-ում էթիկայի նորմերի խախտման դեպքերում կիրառվող կարգապահական տույժերը հիմնված են արդարության, գաղտնիության և պատշաճ ծանուցման սկզբունքների վրա և համապատասխանում են գործող օրենսդրությանը, Մասնաճյուղի կանոնադրությանը և ներքին կանոնակարգերին:
- 10.3. Մասնաճյուղում կարգապահական տույժերի կիրառման դեպքում հաշվի են առնվում խախտման ծանրությունը և դրա հետևանքները, Դերակատարի մեղքի մասը, այդ խախտման կատարման և նախկինում նման խախտում (խախտումներ) կատարած լինելու հանգամանքները:
- 10.4. Յուրաքանչյուր Դերակատար ԵՊՀ ԻՄ ուսանողների, աշխատակիցների և ղեկավար անձանց կողմից էթիկայի նորմերի ենթադրյալ խախտման դեպքի մասին **գրավոր** ներկայացնում է Էթիկայի հանձնաժողովին:
- 10.5. Հանձնաժողովը Էթիկայի նորմերի խախտման վերաբերյալ բողոքը ստանալուց հետո 3 օրվա ընթացքում բողոքի մասին գրավոր տեղեկացնում է շահագրգիռ կողմերին:
- 10.6. Էթիկայի նորմերի խախտման վերաբերյալ զեկուցում ստանալուց հետո 5 օրվա ընթացքում Էթիկայի հանձնաժողովը քննարկում է բողոքը և որոշում.

- 1) բողոքում ներկայացված խախտման վերաբերյալ փաստերը հիմնավոր են, թե՛ ոչ,
- 2) ենթադրյալ խախտում համարվող փաստերը արդյո՞ք ԵՊՀ ԻՄ աշխատակցի (վարչական, ակադեմիական և ղեկավար անձի) կամ ուսանողի էթիկական վարվեցողության կանոնների խախտումներ են:

10.7. Էթիկայի կանոնների խախտման փաստը հիմնավորվելուց հետո Էթիկայի հանձնաժողովը ծանուցում է աշխատակցին կամ ուսանողին գրավոր բացատրություն ներկայացնել՝ նշելով ժամկետը:

10.8. Աշխատակցի կամ ուսանողի կողմից նշված ժամկետներում գրավոր բացատրություն չներկայացնելու դեպքում Էթիկայի հանձնաժողովի կողմից քննարկվում է աշխատակցին կամ ուսանողին համապատասխան կարգապահական տույժի ենթարկելու հարցը:

10.9. Աշխատակցի կամ ուսանողի կողմից նշված ժամկետներում գրավոր բացատրություն ներկայացնելու դեպքում Էթիկայի հանձնաժողովը 5 օրվա ընթացքում քննում է փաստերը և ներկայացված բացատրությունը, քննարկում աշխատակցին կամ ուսանողին համապատասխան կարգապահական տույժի ենթարկելու կամ չենթարկելու հարցը:

11. ԵՊՀ ԻՄ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ, ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԸ

11.1. Էթիկայի կանոնների խախտման առկայության դեպքում ԵՊՀ ԻՄ **ղեկավար, վարչական և ակադեմիական աշխատակցի** նկատմամբ որպես կարգապահական տույժ կարող է կիրառվել

1. նկատողություն,
2. խիստ նկատողություն,
3. աշխատանքային պայմանագրի լուծում:

11.2. Ղեկավար աշխատակցի նկատմամբ տույժ կիրառում է **Մասնաճյուղի տնօրենը՝ Էթիկայի հանձնաժողովի ներկայացմամբ:**

- 11.3.** Մասնաճյուղի տնօրենի նկատմամբ տույժ կիրառում է ԵՊՀ ռեկտորը:
- 11.4.** ԵՊՀ ԻՄ ղեկավար, վարչական և ակադեմիական կազմի աշխատակիցները 1 ամսվա ընթացքում իրավունք ունեն բողոքարկել տույժի ենթարկվելու որոշումը:
- 11.5.** ԵՊՀ ԻՄ ղեկավար, վարչական և ակադեմիական կազմի աշխատակիցները որոշումը բողոքարկելու վերաբերյալ գրավոր բողոքը ներկայացնում են Մասնաճյուղի տնօրենին՝ նշելով բողոքարկման հիմքերը:
- 11.6.** ԵՊՀ ԻՄ տնօրենը, քննարկելով ներկայացված բողոքը, կայացնում է որոշում:
- 11.7.** ԵՊՀ ԻՄ **ուսանողի** կողմից էթիկայի կանոնների խախտման առկայության դեպքում կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը՝
1. **նկատողություն**, որը կիրառվում է քննության ընթացքում արտագրելու կամ արտագրելու փորձ կատարելու, որևէ չթույլատրված սարքավորում կիրառելու, այլ ուսանողի ծածուկ օգնելու կամ օգնելու փորձ կատարելու դեպքում, որոնց համար դասախոսը դադարեցնում է ուսանողի քննությունը և նրան հեռացնում քննասենյակից, կամ էթիկայի հիմնարար սկզբունքներից որևէ մեկը խախտելու դեպքում, երբ ուսանողը այն կատարել է առաջին անգամ,
 2. **խիստ նկատողություն**, որը կիրառվում է նախորդ կետում նշված դեպքերում, երբ ուսանողը մեկ ուսումնական տարվա ընթացքում արդեն ստացել է մեկ նկատողություն,
 3. **Մասնաճյուղից հեռացում:**
- 11.8.** Ուսանողի նկատմամբ տույժ կիրառում է **Մասնաճյուղի տնօրենը՝ Էթիկայի հանձնաժողովի առաջարկով:**
- 11.9.** ԵՊՀ ԻՄ ուսանողները 1 ամսվա ընթացքում իրավունք ունեն բողոքարկել Հանձնաժողովի որոշումը՝ գրավոր բողոքը բողոքարկման հիմքերի և պատճառների հետ միասին ներկայացնելով Մասնաճյուղի տնօրենին:

12. ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

- 12.1.** Սույն Կանոնագիրքը հաստատում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդը:

12.2. Կանոնագրքում փոփոխություններ ու լրացումներ կարող են կատարվել Մասնաճյուղի գիտական խորհրդի որոշմամբ՝ հետևյալ անձնաց կամ մարմինների առաջարկությամբ.

1. տնօրենի,
2. գիտական խորհրդի անդամների,
3. ուսանողական խորհրդի,
4. որակի կառավարման հանձնաժողովի,
5. էթիկայի հանձնաժողովի,
6. արհրյուրոյի: